ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2024 թվականի N 2591-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76, 77, 78 հոդվածների, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետությա օրենքի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24 կետի, ՀՀ Կառավարության «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամսերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001 թ. ապրիլի 12-ի N286 որոշման պահանջներով, ***որոշում եմ***

1. 2024 թվականի դեկտեմբերի 17-ին հայտարարել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքը վարձակալությամբ տրամադրելու մրցույթ, որը տեղի կունենա 2025 թվականի հունվարի 20-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 17
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2592-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹԱԹՈՒԼ ԱԼԲԵՐՏԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ, ՍԵԴԱ ՋԱՆԻԲԵԿԻ ԱՍՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 25.11.2024թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, Գավառ համայնք ք. Գավառ Արծվաքար թաղամասի 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 13 հասցեի գույքի նկատմամբ ժառանգ /վկայագիր՝ տրված 04.12.2024թ./ Թաթուլ Ալբերտի Մելիքյանի /ծնված 20.08.1974թ-ին/ դիմումը, <<Հայր և որդի Դավոյաններ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ համայնք ք. Գավառ Արծվաքար թաղամասի 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 13 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.09 հա, ինչը փաստացի կազմում է 0.11984 հա, որը Թաթուլ Ալբերտի Մելիքյանի /ծնված 20.08.1974թ-ին / ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 260.4 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1970թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.11984 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Արծվաքար թաղամասի 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 13 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Թաթուլ Ալբերտի Մելիքյանի /ծնված 20.08.1974թ-ին /,Սեդա Ջանիբեկի Ասոյանի /ծնված 03.03.1951թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.09 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.02984 հա հողամասի

գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.11984 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 260.4 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1970թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք ք. Գավառ Արծվաքար թաղամասի 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 13 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2593-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Արամ Վասիլի Աբրահամյանին, Սոֆիկ Անդրեազի Աբրահամյանին, Թամարա Ռաֆիկի Մխեյանին, Սմբատ Արամի Աբրահամյանին, Գևորգ Արամի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից /վկայական N 11122024-05-0100 տրված 2024 թվականի դեկտեմբերի 11-ին, վկայական N 04122024-05-0023 տրված 2024 թվականի դեկտեմբերի 04-ին, վկայական N 04122024-05-0085 տրված 2024 թվականի դեկտեմբերի 04-ին, վկայական N 04122024-05-0058 տրված 2024 թվականի դեկտեմբերի 04-ին, վկայական N 04122024-05-0064 տրված 2024 թվականի դեկտեմբերի 04-ին, վկայական N 04122024-05-0075 տրված 2024 թվականի դեկտեմբերի 04-ին, վկայական N 11122024-05-0068 տրված 2024 թվականի դեկտեմբերի 11-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Արամ Վասիլի Աբրահամյանին, Սոֆիկ Անդրեազի Աբրահամյանին, Թամարա Ռաֆիկի Մխեյանին, Սմբատ Արամի Աբրահամյանին, Գևորգ Արամի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ հասցեում գտնվող 0.0678 հա մակերեսով 05-001-0673-0025 կադաստրային ծածկագրով, 0.01478 հա մակերեսով 05-001-0602-0247 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 0.31528 հա մակերեսով 05-001-0692-0368 կադաստրային ծածկագրով, 0.09944 հա մակերեսով 05-001-0691-0340 կադաստրային ծածկագրով, 0.04888 հա մակերեսով 05-001-0691-0287 կադաստրային ծածկագրով, 0.02763 հա մակերեսով 05-001-0691-0365 կադաստրային ծածկագրով, 0.17257 հա մակերեսով 05-001-0687-0066 կադաստրային ծածկագրով խոտհարքները ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2594-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՂԻՆԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը և Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Հենրիկ Աբրահամյան փողոց 2-րդ փակուղի 12 հասցեի սեփականատեր Սամվել Վաղինակի Ավետիսյանի /ծնված 07.08.1945թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.11724 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Գավառ քաղաքի 05-001-0394-0004 կադաստրային ծածկագրի՝ Սամվել Վաղինակի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 2731295/ գույքի բաժանումից առաջացած 0.04202 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան 2-րդ փողոց, 12/2 բնակելի տուն հասցեն:
2. Գավառ քաղաքի 05-001-0394-0004 կադաստրային ծածկագրի՝ Սամվել Վաղինակի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 2731295/ գույքի բաժանումից առաջացած 0.07522 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան 2-րդ փողոց, 12/1 հողամաս հասցեն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2595-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակապման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության Գեղարքունիքի Մարզի Կարմիրգյուղ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 01 դեկտեմբերի 2005թ. N 2350-Ն որոշումը, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գյուղ Կարմիրգյուղ /կադաստրային ծածկագիր 05-056-0018-003/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել 0.00541 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ համայնք, գյուղ Կարմիրգյուղ Ազատության փողոց, թիվ 15/1 հողամաս հասցեն:

2. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի

3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2596-Ա

ՀԱԿՈԲ ԽԱՉԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳԱՆՁԱԿ Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/1 ԵՎ ԳՅՈՒՂ ԳԱՆՁԱԿ Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/5 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հաշվի առնելով նշված հասցեների սեփականատեր Հակոբ Խաչիկի Հակոբյանի /ծնված 20.10.1961թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, *որոշում եմ*

1.Գավառ համայնքի գյուղ Գանձակ Հ. Բաղրամյան փողոց թիվ 2/1 /սեփ. վկայական N13102021-05-0083/ և գյուղ Գանձակ Հ. Բաղրամյան փողոց թիվ 2/5 /սեփ. վկայական N28102021-05-0014/ հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել և միավորված գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Գանձակ Հ. Բաղրամյան փողոց թիվ 2/1 գեղեցկության սրահ հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2597-Ա

«ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք ԳԱՎԱՌ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 42/2 ՊԱՀԵՍՏ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ք Գավառ Զորավար Անդրանիկի 1-ին փողոց թիվ 42/2 պահեստ հասցեի «Բարեկամություն» ՍՊԸ-ի տնօրեն Հակոբ Ցոլակի Հովհաննիսյանի /ծնված 15.12.1950թ-ին/ լիազորված անձ /լիազորագիր տրված 31.10.2024թ-ին/ Արտուշ Վոլոդյայի Փեփոյանի /ծնված 18.09.1958 թ-ին/ դիմումը, «Բարեկամություն» ՍՊԸ-ի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը առ 2024-11-05, հանձնման ընդունման ակտը՝ տրված 26.04.1993թ-ին, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, որոնց համաձայն Գավառ համայնքի ք Գավառ Զորավար Անդրանիկի 1-ին փողոց թիվ 42/2 պահեստ հասցեի հողամասը չափագրվել է /ծածկագիր 05-001-0177-0002/ և հաշվի առնելով, որ 1988թ-ին կառուցված 2112.10 քմ. մակերեսով շինությունների կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.48934 հա ընդհանուր մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ համայնք ք Գավառ Զորավար Անդրանիկի 1-ին փողոց թիվ 42/2 պահեստ հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ «Բարեկամություն» ՍՊԸ-ի հողօգտագործման իրավունքը, շինությունների կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով «Բարեկամություն» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը 0.48934 հա ընդհանուր մակերեսով հողամասի և 1988թ-ին կառուցված 2112.10 քմ. մակերեսով շինությունների նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում

լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի հողամասը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի կամ դրա մասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի իրացման (այդ թվում՝ գրավառուի կողմից բռնագանձման հետևանքով հողամասը գրավատուից ձեռքբերման) դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվել հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք ք Գավառ Զորավար Անդրանիկի 1-ին փողոց թիվ 42/2 պահեստ հասցեն:

3. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2598-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակապման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության Գեղարքունիքի Մարզի Գանձակ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 08 ապրիլի 2004թ. N 446-Ն որոշումը, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գյուղ Գանձակ /կադաստրային ծածկագիր 05-021-0051-0017/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել 0.00283 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ համայնք, գյուղ Գանձակ Հ. Աբրահամյան փողոց, թիվ 29/1 հողամաս հասցեն:

2. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել հասարակական կառուցապատման հողատեսքի

3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

20 24 թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2599-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակապման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության Գեղարքունիքի Մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 13 հուլիսի 2006թ. N 1176-Ն որոշումը, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի /կադաստրային ծածկագիր 05-001-0289-0001/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00559 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ազատության փողոց, 1-ին նրբանցք, 1-ին փակուղի թիվ 63 հասցեն:

2.Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2600-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-001-0125-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.00225 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 10.12.2024թ. թիվ 11 նիստի թիվ 359-Ա որոշումը, *որոշում եմ*

1.Գավառ համայնքի Նալբանդյան փողոց թիվ 1/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 26112024-05-0010, 05-001-0125-0006 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00332 հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատեսքը ավտոտնակ կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու համար 2025 թվականի հունվարի 20-ին հայտարարել աճուրդ:

2.Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ մեկ քառակուսի մետրի համար:

3.Հանձնարարել աճուրդի կազմակերպչին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2601-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Սեդրակ Իլյայի Խնկոյանին, Սոֆյա Արարատի Վարդանյանին, Կամո Իլյայի Խնկոյանին, Ալլա Կամոյի Խնկոյանին, Անդրանիկ Կամոյի Խնկոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / վկայական N 03122024-05-0033 տրված 2004 թվականի դեկտեմբերի 29-ին, վկայական N 02122024-05-0030 տրված 2004 թվականի դեկտեմբերի 29-ին, վկայական N 03122024-05-0041 տրված 2004 թվականի դեկտեմբերի 29-ին, վկայական N 1012024-05-0011 տրված 2005 թվականի մայիսի 23-ին, վկայական N 04122024-05-0057 տրված 2004 թվականի դեկտեմբերի 29-ին / հրաժարվելու մասին դիմումը, *որոշում եմ*

1. Քաղաքացիներ Սեդրակ Իլյայի Խնկոյանին, Սոֆյա Արարատի Վարդանյանին, Կամո Իլյայի Խնկոյանին, Ալլա Կամոյի Խնկոյանին, Անդրանիկ Կամոյի Խնկոյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ հասցեում գտնվող 0.563 հա մակերեսով 05-001-1178-0400 կադաստրային ծածկագրով, 0.0854 հա մակերեսով 05-001-1178-0748 կադաստրային ծածկագրով, 0.4093 հա մակերեսով 05-001-1166-0030 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 1.0454 հա մակերեսով 05-001-1168-1286 կադաստրային ծածկագրով, 0.3892 հա մակերեսով 05-001-1168-1455 կադաստրային ծածկագրով խոտհարքները ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2602-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Հենզելիկ Վոլոդյայի Գաբրիելյանին, Ժաննա Վրեժի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից /վկայական N 03122024-05-0014 տրված 2001 թվականի սեպտեմբերի 28-ին, վկայական N 06122024-05-0075 տրված 2003 թվականի ապրիլի 15-ին, վկայական N 03122024-05-0063 տրված 2024 թվականի դեկտեմբերի 03-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Հենզելիկ Վոլոդյայի Գաբրիելյանին, Ժաննա Վրեժի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Գանձակ հասցեում գտնվող 0.222 հա մակերեսով 05-021-0249-0018 կադաստրային ծածկագրով, 0.203 հա մակերեսով 05-021-0251-0032 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 0.363 հա մակերեսով 05-021-0259-0114 կադաստրային ծածկագրով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2603-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Պապին Ալեքսանի Նավոյանին, Վիկտոր Գառնիկի Նավոյանին, Սիլվա Պապինի Նավոյանին, Գևորգ Պապինի Նավոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից /վկայական N 1339665 տրված 2004 թվականի մայիսի 31-ին, վկայական N 1339664 տրված 2004 թվականի մայիսի 31-ին, վկայական N 1339663 տրված 2004 թվականի մայիսի 31-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Պապին Ալեքսանի Նավոյանին, Վիկտոր Գառնիկի Նավոյանին, Սիլվա Պապինի Նավոյանին, Գևորգ Պապինի Նավոյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Կարմիրգյուղ հասցեում գտնվող 0.223 հա մակերեսով 05-056-0350-0009 կադաստրային ծածկագրով, 0.182 հա մակերեսով 05-056-0339-0013 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 0.116 հա մակերեսով 05-056-0601-0476 կադաստրային ծածկագրով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2024 թվականի N 2604-Ա

ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, «Խմամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 11.12.2024թ. արձանագրությունը, ***որոշում եմ***

1. Անչափահաս Սոֆյա Սերոբի Խաչիկյանի /ծնված 04.11.2014թ., ծննդյան վկայական 1-ԺՀ N279153, տրված 24.03.2015թ./ իրավունքների և շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով երեխայի հոր՝ Սերոբ Սարիբեկի Խաչիկյանի /անձնագիր՝ AT0271003, տրված 16.08.2019թ. 040-ի կողմից/ և երեխայի տեսակցության կարգ սահմանել Հայաստանի Հանրապետությունում հոր գտնվելու ժամանակահատվածում ամեն երեքշաբթի և հինգշաբթի օրերին, ժամը 16^{00}-ից մինչև 19^{00}-ն՝ երեխայի մոր բնակության վայրում, ինչպես նաև շաբաթ օրը 12^{00}-ից մինչև կիրակի օրը ժամը 16^{00}-ն գավառում՝ հոր բնակության վայրում երեխայի ցանկությամբ՝ նաև գիշերակացով:
2. Երեխային Գավառ տանել-բերելու և մորը վերադարձնելու պարտականությունները վերապահել Սերոբ Սարիբեկի Խաչիկյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 18
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2024 թվականի N 2605-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Գ. ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ՍԵՐԳՈ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 98 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐԻԿ ՌԱՖԻԿԻ ՆԱՋԱՐՅԱՆԻ, ՌԻՏԱ ՌԱՖԻԿԻ ՆԱՋԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 16.12.2024թ. տրված Կարմիրգյուղ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը, գ. Կարմիրգյուղ Սերգո Ավետիսյան փողոց թիվ 98 հասցեի գույքի նկատմամբ ժառանգ /վկայագիր՝ տրված 21.10.2024թ./ Նորիկ Ռաֆիկի Նաջարյանի /ծնված 02.01.1954թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ -ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ համայնք գ. Կարմիրգյուղ Սերգո Ավետիսյան փողոց թիվ 98 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.19 հա, ինչը փաստացի կազմում է 0.10736 հա, որը Նորիկ Ռաֆիկի Նաջարյանի /ծնված 02.01.1954թ-ին / ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 263.64 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1950-1975թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10736 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ համայնք գ. Կարմիրգյուղ Սերգո Ավետիսյան փողոց թիվ 98 հասցեում գտնվող շինությունների նկատմամբ Նորիկ Ռաֆիկի Նաջարյանի /ծնված 02.01.1954թ-ին /, Ռիտա Ռաֆիկի Նաջարյանի / /ծնված 08.12.1959թ-ին/ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական կառուցված 263.64 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1950-1975թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գ. Կարմիրգյուղ Սերգո Ավետիսյան փողոց թիվ 98 հասցեն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

20 24 թ. նոյեմբերի 19
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2024 թվականի N 2606-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Գ. ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԶՈՀՐԱԲ ՇՀՈՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՄՈՆ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՋՈՒԼԵՏԱ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԳՐԵՏԱ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26 դեկտեմբերի 2002թ-ի N 510-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 21.03.2024թ. տրված Կարմիրգյուղ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 19.03.2024թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Սիմոն Գառնիկի Վարդանյանի /ծնված 02.05.1961թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ համայնքի գ Կարմիրգյուղ Զոհրաբ Շհոյան փողոց թիվ 21 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.257 հա, ինչը փաստացի կազմում է 0.23218 հա, որը Սիմոն Գառնիկի Վարդանյանի /ծնված 02.05.1961թ-ին / ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 233.4 քմ և ինքնակամ կառուցված 44.31քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1965-2010թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.23218 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Վերականգնել Գավառ համայնքի գ. Կարմիրգյուղ Զոհրաբ Շհոյան փողոց թիվ 21 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Սիմոն Գառնիկի Վարդանյանի /ծնված 02.05.1961թ-ին /, Ջուլետա Գառնիկի Վարդանյանի /ծնված 10.03.1957թ-ին/, Գրետա Գառնիկի Վարդանյանի /ծնված 19.07.1959թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.23218 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 2010թ-ին ինքնակամ կառուցված 42.40 քմ մակերեսով անասնաշենքը և 1.91քմ մակերեսով պարիսպը ճանաչել որպես ինքնակամ շինություն:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գ. Կարմիրգյուղ Զոհրաբ Շհոյան փողոց, թիվ 39/4 հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 19
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2024 թվականի N 2607-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵՎ ԼՅՈՒԴՄԻԼԱ ՍԻՐԱԿԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, 26.12.2002թ. թիվ ՀՕ-510-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դրույթների պահանջներով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով 29.11.2024թ. տրված ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղ Կարմիրգյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը և Լյուդմիլա Սիրականի Ավագյանի /ծնված 11.10.1958թ-ին/ դիմումը «Հայր և Որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, որի համաձայն Գավառ համայնք գ. Կարմիրգյուղ Տ. Պետրոսյան փողոց 2-րդ նրբանցք թիվ 1 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է /կադաստրային ծածկագիր 05-056-0180-0001/, հատկացվել է 0.129 հա, ինչը փաստացի կազմում է 0.124հա որը Լյուդմիլա Սիրականի Ավագյանի /ծնված 11.10.1958թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Վերականգնել Գավառ համայնք գ. Կարմիրգյուղ Տ. Պետրոսյան փողոց 2-րդ նրբանցք թիվ 1 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր 05-056-0180-0001/ գույքային միավորի նկատմամբ Նորիկ Արամայիսի Ավետիսյանի /ծնված 06.11.1951թ-ին/ և Լյուդմիլա Սիրականի Ավագյանի /ծնված 11.10.1958թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները, ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.124հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ.
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2024 թվականի N 2608-Ա

ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 29-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 196 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵՎ ԼՅՈՒԴՄԻԼԱ ՍԻՐԱԿԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով 29.11.2024թ. տրված ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղ Կարմիրգյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը, Գավառ համայնք գ. Կարմիրգյուղ Ազատության պողոտա թիվ 196 հասցեի համասեփականատեր Լյուդմիլա Սիրականի Ավագյանի /ծնված 11.10.1958թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գ. Կարմիրգյուղ Ազատության պողոտա թիվ 196 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է (կադաստրային ծածկագիր 05-056-0082-0001), հատկացվել է 0.148 հա, ինչը փաստացի կազմում է 0.14853 հա, որը Լյուդմիլա Սիրականի Ավագյանի /ծնված 11.10.1958թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 200.39 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1961-1993թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.14853 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Ուժը կորցրած ճանաչել Կարմիրգյուղ համայնքի ղեկավարի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 29-Ա որոշումը:

2. Վերականգնել Գավառ համայնք գ. Կարմիրգյուղ Ազատության պողոտա թիվ 196 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Նորիկ Արամայիսի Ավետիսյանի /ծնված 06.11.1951թ-ին/ և Լյուդմիլա Սիրականի Ավագյանի /ծնված 11.10.1958թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 0.148 հա մակերեսով հողամասի նկատմամբ, ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.14853 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 200.39 քմ մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1961-1993թթ-ին/ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 20
ք.Գավառ